

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2 (երկրորդ մաս)

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության Ընտրական հանձնաժողովի 2010թ. մայիսի 18-ին կայացած նիստի երկրորդ մասի

2010 թվականի մայիսի 18-ին կայացած նիստի երկրորդ մասին, որը հետաձգվել էր սույն թվականի մայիսի 19-ին, ներկա էին ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության Ընտրական հանձնաժողովի նախագահ **Արտակ Մարիբեկյանը**, Ընտրական հանձնաժողովի քարտուղար **Մարիաննա Եղիազարյանը**, Ընտրական հանձնաժողովի անդամներ՝

**Վահագն Ասրյանը, Մարիամ Օսիպյանը, Լիլիթ Քամալյանը, Ամալյա Բալաբեկյանը, Գայանե Գևորգյանը, Խաչատուր Բարսեղյանը, Տաթևիկ Ավագյանը:**

Ընտրական հանձնաժողովի անդամներ **Գայանե Արսենյանը** և **Անահիտ Հակոբյանը** նիստին մասնակցում էին հեռախոսակապի միջոցով:

Նիստին մասնակցում էին նաև՝

Էսթեր Հակոբյանը՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի համակարգման ղեկավար,

Վիկտորյա Գրիգորյանը՝ ՇԽ օգնական:

Նախքան նիստը սկսելը Ընտրական հանձնաժողովի նախագահը հայտնեց, որ ինքը կապ է հաստատել տեխնիկական խնդիրների պատճառով ուշացած հայտով թեկնածություն առաջադրած Գաբրիել Բալայանի հետ, և վերջինս պետք է գա և մասնակցի Ընտրական հանձնաժողովի նիստին: Ընտրական հանձնաժողովի անդամներից Վահագն Ասրյանն էլ իր հերթին հայտնեց, որ ինքը հրավիրել է համապատասխան մասնագետին, որպեսզի տեխնիկական խնդիրների պարզաբանում տրվի:

Գաբրիել Բալայանը ժամանեց: Ընդհանուր նամակագրական կապի ներկայացումից հետո Ընտրական հանձնաժողովի անդամները ուղղեցին իրենց հարցերը պարոն Բալայանին:

ԸՀ անդամ Վ. Ասրյանը խնդրեց ՇԽ օգնականին պարզաբանում տալ Գ. Բալայանի կողմից բարձրացված այն հարցին, թե արդյոք ՇԽ օգնականը իրավասու է հաստատել կամ մերժել հայտերը: Այս առիթով ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը նշեց, որ համաձայն ՇԽ/ԿԽ անդամների ընտրակարգի՝ ՇԽ օգնականը ընդունում է հայտերը և դա անում է սահմանված ժամկետների շրջանակներում: Գ. Բալայանի պարագայում պատասխան նամակում նշվել է, որ իր հայտը ներկայացվել է ուշ և այդ պատճառով իր կողմից չի կարող ընդունվել իր կողմից, սակայն նշվել է նաև, որ կարվի համապատասխան ուսումնասիրություն հայտի ներկայացման ժամկետները հստակեցնելու նպատակով:

Գ. Բալայանի կողմից բարձրացվեց նախկին ՇԽ կազմի կողմից կիրառված այն դեպքը, երբ էլեկտրոնային եղանակով ուշ ներկայացված հայտը ընդունվել է և խնդրեց իր պարագայում կիրառել նույն նախադեպը: Այս կապակցությամբ ԸՀ անդամները խնդրեցին ՊՈԱԿ-ի աշխատակիցներին տալ համապատասխան պարզաբանում: Համակարգող ղեկավար Է. Հակոբյանը նշեց, որ այդ դեպքը առնչվում է 2009թ. ԸՀ կազմի ձևավորմանը, որ ամբողջապես եղել է ՇԽ իրավասությունների շրջանակներում: Է. Հակոբյանը չմտաբերեց հստակ ժամկետների առկայություն:

ՇԽ օգնականը ԸՀ-ին հիշեցրեց ԸՀ նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ, որի մեջ ի դեպ նախատեսված չէր Գ. Բալայանի հետ հանդիպումը և առաջարկեց ԸՀ անդամներին իրենց հարցերն ուղղել հրավիրյալին, իսկ որոշման հետ կապված քննարկումները ծավալել

Գ. Բալայանի հեռանալուց հետո: Է. Հակոբյանը իր համաձայնությունը տվեց առաջարկությանը:

Գ. Բալայան. «Ես հիշում եմ, որ ժամկետի հետ կապված սահմանված օր եղել է և ես հիմա խնդրել եմ հանձնաժողովին, եթե կիրառելի է այդ նախադեպն իմ դեպքում, ապա կիրառեն, եթե ոչ՝ ապա ես ոչ մի խնդիր չունեմ»:

Վ. Ասրյան. «Դուք պատասխան նամակ ստացե՞լ եք Վ. Գրիգորյանից»:

Գ. Բալայան. «Այո, դա նոր ընթերցվեց»: Ա. Սարիբեկյանն ասաց. «Ես կրկին կընթերցեմ համապատասխան հատվածը», ինչը Ա. Սարիբեկյանի կողմից կատարվեց:

Խ. Բարսեղյանն ասաց. «Կարգում մենք արդեն փաստացի փոփոխություն ենք կատարել՝ փոխարինելով մայիսի 7-ը մայիսի 12-ով»:

Ա. Սարիբեկյանը հայտարարեց. «Ես որոշեցի երեկոյան նամակ գրել Գ. Բալայանին այս հարցը պարզաբանելու համար, քանի որ նա ուղարկել է նամակը brusov.ru-ից, իսկ տեղեկանքը բերվել է brusov.am-ից»:

Ա. Սարիբեկյանի կողմից ընթերցվեց համապատասխան նամակը, որից հետո ընթերցվեց նաև նախորդ նամակի պատասխան նամակը: Վ. Ասրյանն ասաց. «Դուք ժամը քանիսի՞ն եք իմացել, որ սերվերը չի աշխատում»: Գ. Բալայան. «Յերեկվա ժամերին»:

MCA Կայքավար Դավիթը, որը հրավիրվել էր Վ. Ասրյանի կողմից, ասաց. «Եթե Դուք նամակը ուղարկել եք փոստային ծրագրում brusov.ru դոմայն գրելուց հետո, ապա դա չի կարող դուրս գալ և ուղարկվել»: Վ. Գրիգորյան. «Բայց Դուք նամակում գրել էիք «Հուսով եմ՝ նախորդ նամակն էլ է հասել Ձեզ»:

Դավիթը նշեց. «Եթե Դուք պնդում եք, որ «ru»- եք հավաքել, ապա միանշանակ դա չէր կարող գնալ»:

Գ. Բալայան. «Եթե այդպես էր, ես կարող էի նաև «ru»-ն փոխարինել: Ես մտածված եմ թողել, որպեսզի երևա, թե ինչի պատճառով չի հասել նամակը»:

Դավիթ. «Մինչև այդ պահը Դուք ոչ մի նամակ չէիք կարող ուղարկել: «Brusov.ru»-ում brusov.am –ին պատկանող Էլ.փոստը չի կարող իդենտիֆիկացվել: Ձեր մոտից հաջորդ նամակը եկել է brusov.ru-ն brusov.am –ով փոխարինելուց հետո»:

Գ. Բալայան. «Եթե ընդունելի են իմ պարզաբանումները, ես դուրս կգամ, Դուք որոշեք»:

Դավիթը նշեց. «Ես երկու հարց ունեմ. Դուք ուղղել եք նամակը սխալ կարգավորումներով, և որը տեղ չի հասել, այնուհետև այն «FORWARD» արել Վիկտորյային: Ձեզ մոտ սխալ կարգավորում է եղել, չի եկել, հետո ուղղել եք այն, ապա նոր կարողացել «FORWARD» անել այդ նամակը Վիկտորյային: Դրանից հետո ինչու՞ եք պնդում. «Ես ուղարկել եմ, դուք չեք ստացել»: Փաստորեն ձեր դեպքում տեղի է ունեցել երկու քիչ հավանական պատահարներ: Գ. Բալայանը պատասխանեց «Իմ աշխատանքը 4.30 է ավարտվում.. ես չեմ էլ նայել, նստել ուղարկել եմ»:

Դավիթն ասաց. «Տեսականորեն հնարավոր է, բայց քիչ է հավանական»:

Գ. Բալայանը նշեց. «Իմ ներկայացրած տեղեկանքում ձևակերպման սխալ կա, հիմա ես երկրորդ տեղեկանքն եմ վերցրել և ներկայացնում եմ ձեզ»:

Ապա պարոն Բալայանը հեռացավ: Այնուհետև Վ. Ասրյանն ասաց. «Իմ կարծիքով հաջորդ օրը՝ 16.45-ին նա որոշել է մի հատ էլ հայտ ես ուղարկեմ, որովհետև ինչ-որ մեկը նրան ասել է, որ 14 հոգի են թեկանծունեքը: Բացի այդ ես կարծում եմ, որ համապատասխան տեղեկանք տրամադրող անձը Գ. Բալայանի ենթակայության տակ է գտնվում, կարող էր կեղծ տեղեկանք տալ»:

Ա. Սարիբեկյանի այս խոսքից հետո, այն է՝ «Դավիթ», խնդրում եմ որպես մասնագետ Ձեր կարծիքը հայտնեք այս խնդրի վերաբերյալ, որից հետո մենք կկարողանանք համապատասխան որոշում կայացնել», հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնեց նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի IT մասնագետը. «Ես կարծում եմ, որ դա տեսականորեն հնարավոր է, բայց գործնականում քիչ է հավանական»:

Որից հետո նա ևս հեռացավ:

Կարճատև քննարկումից հետո Լիլիթ Քամալյանը անսպասելի լքեց նիստերի դահլիճը՝ հայտարարելով, որ կվերադառնա 5 րոպեից և որ Ընտրական հանձնաժողովի անդամները

ծանոթանան լիազորագրին: Այնուհետև, այդ գրությանը ծանոթանալուց հետո պարզ դարձավ, որ հենց նիստի ընթացքում Լ. Քամալյանի կողմից ձեռագիր կազմված «Լիազորագրի» համաձայն նա լիազորել էր Վահագ Ասրյանին քվեարկել իր անունից: Գրությունը չդրվեց քվեարկության, թեկուզ այն հիմնավորմամբ, որ լիազորված անձի անուն-ազգանունը սխալ էր գրված:

Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությունը ապահովվեց միայն մոտ մեկ ժամ անց:

Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցությամբ նիստը վերսկսվեց: Նիստին մասնակցում էին Ընտրական հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանը, Ընտրական հանձնաժողովի քարտուղար Մարիաննա Եղիազարյանը, ընտրական հանձնաժողովի անդամներ Վահագն Ասրյանը, Մարիամ Օսիպյանը, Լիլիթ Քամալյանը, Ամալյա Բալաբեկյանը, Գայանե Գևորգյանը (հեռախոսային կապի միջոցով), Խաչատուր Բարսեղյանը, Տաթևիկ Ավագյանը, Գայանե Արսենյանը (հեռախոսային կապի միջոցով) և Անահիտ Հակոբյանը (հեռախոսային կապի միջոցով):

Նիստի ընթացքում քվեարկության դրվեց 7 հարց:

Ընտրական հանձնաժողովի անդամներից Վահագն Ասրյանի առաջարկությամբ առաջին հերթին քվեարկության դրվեց պարոն Բալայանի հայտի ընդունման հարցը:

**Առաջին հարցի վերաբերյալ.**

Քվեարկության դրվեց Գ. Բալայանի, որպես թեկնածու առաջադրվելու վերագերյալ՝ սահմանված ժամկետից դուրս ներկայացված հայտի ուշացումը հարգելի ճանաչելու և հայտն ընդունելու վերաբերյալ հարցը:

**Կողմ** քվեարկեց Ընտրական հանձնաժողովի անդամներից 5-ը /Խաչատուր Բարսեղյանը, Մարիամ Օսիպյանը, Գայանե Գևորգյանը, Անահիտ Հակոբյանը, Գայանե Արսենյանը/:

**Դեմ** քվեարկեցին 4-ը /Վահագն Ասրյանը, Լիլիթ Քամալյանը, Տաթևիկ Ավագյանը, Ամալյա Բալաբեկյանը/:

**Չեռնպահ** քվեարկեցին 2-ը /Արտակ Սարիբեկյանը, Մարիաննա Եղիազարյանը/:

**Այսպիսով, Գ. Բալայանի կողմից ներկայացված հայտը հաստատվեց:**

**Երկրորդ հարցի վերաբերյալ.**

Քվեարկության դրվեց թերի հայտերից «Հաղթանակի երիտասարդ ֆերմերներ» ՀԿ-ի հայտի թերությունների վերացման համար պայմանական ժամկետի սահմանման հարցը՝ պայմանով, որ 20.05.2010թ. [www.mca.am](http://www.mca.am) կայքում կտեղադրվի այդ հայտը՝ որպես պայմանական ընդունված հայտ և միաժամանակ փոստով կտեղեկացվի տվյալ կազմակերպությանը իր հայտում ունեցած թերության մասին:

Հարցին **կողմ** քվեարկեցին Ընտրական հանձնաժողովի անդամներից 10-ը /Արտակ Սարիբեկյան, Մարիաննա Եղիազարյան, Տաթևիկ Ավագյան, Լիլիթ Քամալյան, Մարիամ Օսիպյան, Խաչատուր Բարսեղյան, Ամալյա Բալաբեկյան, Գայանե Արսենյան, Գայանե Գևորգյան, Անահիտ Հակոբյան/:

**Դեմ** քվեարկեց 1-ը՝ Վահագն Ասրյանը:

**Չեռնպահ՝ 0**

**Այսպիսով, վերոնշյալ հարցը հաստատվեց:**

**Երրորդ հարցի վերաբերյալ.**

Քվեարկության դրվեց «Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցացիա» ՀԿ-ի թերի ներկայացված հայտի մերժման հարցը:

**Կողմ` 7 ձայն /Արտակ Սարիբեկյան, Մարիաննա Եղիազարյան, Տաթևիկ Ավագյան, Մարիամ Օսիպյան, Ամալյա Բաաբեկյան, Գայանե Գևորգյան, Անահիտ Հակոբյան/:**

**Դեմ` 2 ձայն /Խաչատուր Բարսեղյան, Վահագն Ասրյան/:**

**Չեռնալահ` 2 ձայն / Լիլիթ Քամալյան, Գայանե Արսենյան/**

**Այսպիսով, ձայների մեծամասնությամբ, «Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցացիա» ՀԿ-ի հայտը մերժվեց:**

**Չորրորդ հարցի վերաբերյալ.**

Քվեարկության դրվեց «Հացիկի «Հացիկ» ՀԿ-ի թերի ներկայացված հայտի մերժման հարցը:

**Կողմ` 7 ձայն /Արտակ Սարիբեկյան, Մարիաննա Եղիազարյան, Տաթևիկ Ավագյան, Մարիամ Օսիպյան, Ամալյա Բաաբեկյան, Գայանե Գևորգյան, Անահիտ Հակոբյան/:**

**Դեմ` 3 ձայն /Խաչատուր Բարսեղյան, Լիլիթ Քամալյան, Վահագն Ասրյան/:**

**Չեռնալահ` 1 ձայն / Գայանե Արսենյան/:**

**Այսպիսով, ձայների մեծամասնությամբ, Հացիկի «Հացիկ» ՀԿ-ի հայտը մերժվեց:**

**Հինգերորդ հարցի վերաբերյալ**

Քվեարկության դրվեց առկա 282 հայտերը ընդունված ճանաչելու վերաբերյալ հարցը:

**Կողմ` 7 ձայն` /Արտակ Սարիբեկյան, Մարիաննա Եղիազարյան, Գայանե Արսենյան, Մարիամ Օսիպյան,Գայանե Գևորգյան, Անահիտ Հակոբյան, Խաչատուր Բարսեղյան/:**

**Դեմ` 4 ձայն /Տաթևիկ Ավագյան, Լիլիթ Քամալյան, Ամալյա Բաաբեկյան, Վահագն Ասրյան/:**

**Այսպիսով, ձայների մեծամասնությամբ, առկա 282 հայտերը հաստատվեցին:**

**Վեցերորդ հարցի վերաբերյալ**

Քվեարկության դրվեց առկա 19` որպես թեկանծու առջադրվելու հայտերը ընդունված ճանաչելու վերաբերյալ հարցը:

**Կողմ` 7 ձայն /Արտակ Սարիբեկյան, Մարիաննա Եղիազարյան, Գայանե Արսենյան, Մարիամ Օսիպյան,Գայանե Գևորգյան, Անահիտ Հակոբյան, Խաչատուր Բարսեղյան/:**

**Դեմ` 4 ձայն /Տաթևիկ Ավագյան, Լիլիթ Քամալյան, Ամալյա Բաաբեկյան, Վահագն Ասրյան/:**

**Այսպիսով, ձայների մեծամասնությամբ, որպես թեկնածու առաջադրվելու 19 հայտերը հաստատվեցին:**

**Յոթերորդ հարցի վերաբերյալ**

Քվեարկության դրվեց Մ. Եղիազարյանի առաջարկը, որի համաձայն առաջակվում էր մշակել և ընդունել ակտ, որի համաձայն մայիսի 21-ին ՀՄՀ-Հայաստան գրասենյակ չայցելած և մայիսի 22-ին` ընտրությունների օրը ընտրական տեղամասում ներկա չգտնվող` Ընտրական հանձնաժողովի անդամը/անդամները մեխանիկորեն դուրս են մնում Ընտրական հանձնաժողովի կազմից:

**Կողմ` 6 ձայն / Մարիաննա Եղիազարյան, Գայանե Արսենյան, Մարիամ Օսիպյան, Գայանե Գևորգյան, Անահիտ Հակոբյան, Խաչատուր Բարսեղյան/:**

**Դեմ` 1 ձայն / Լիլիթ Քամալյան /:**

**Չեռնալահ` 4 ձայն /Տաթևիկ Ավագյան, Ամալյա Բալաբեկյան, Վահագն Ասրյան, Արտակ Սարիբեկյան /:**

**Այսպիսով, ձայների մեծամասնությամբ առաջարկը հաստատվեց:**


*Ընտրական հանձնաժողովի նախագահ`*

*Արտակ Սարիբեկյան*



*Ընտրական հանձնաժողովի քարտուղար`*

*Մարիաննա Եղիազարյան*



ԸՀ անդամներ`

*Վահագն Ասրյան*

*Գայանե Գևորգյան*

*Մարիամ Օսիպյան*

*Խաչատուր Բարսեղյան*

*Ամալյա Բալաբեկյան*

*Գայանե Արսենյան*

*Անահիտ Հակոբյան*

*Տաթևիկ Ավագյան*

*Լիլիթ Քամալյան*



**19.05.2010թ.**